

ԱՄԻՐԴՈՎԼԱԹ ԱՄԱՍԻԱՑԻՆ ԵՎ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ
ՀԱՅ ԲԺՇԿԱԿԱՆ ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ս. Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Ամիրդովլաթ Ամասիացին ոչ միայն հանճարեղ բժիշկ էր, այլ նաև իր ժամանակի հմուտ լեզվաբաններից ու բառարանագետներից մեկը։ Մեծ ավանդ ունի նա բժշկական ու բուսաբանական տերմինաբանության բնագավառում։ Իր «Օգուտ բժշկութեան», «Անգիտաց անպէտ», «Ախրապատին» աշխատութիւններում շարունակելով «Գագիկ-Հեթումյան բժշկարանի» և Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարութեան» ավանդույթները, նա նոր ուղիներ բացեց հայրենական տերմինաբանության առջև։ «Անգիտաց անպէտում», ինչպես և այլ գործերում, նա բնիկ հայերեն բառերից բացի օգտագործել է փոխառյալ տերմիններ մի շարք լեզուներից (հունարենից, լատիներենից, արաբերենից, պարսկերենից, թուրքերենից)։ Գրքի առաջաբանում Ամասիացին հետևյալ ձևով է բնութագրել իր կատարած աշխատանքը. «Հաւաքեցաք շատ գրեանք ի յայլ ազգեաց և աշխատեցաք և ուսաք գրառերն և զանուանքն ազգի ազգի և զփոխանն և զառնելուն չաքն, հինգ լեզուաւ, կամօքն Աստուծոյ»¹։ Սակայն վերոհիշյալ հինգ լեզուներից բացի նա հաճախ գործ է ածել փոխառյալ տերմիններ այլ լեզուներից (հնդկերեն լեզուներից, ղըփ-չաղերենից), ինչպես նաև պարսկերենի բարբառներից (Շիրազի, խորասանի, Բաղսի, Բուխարայի, Սափարկանդի)։

Միջնադարյան հայ բժշկական տերմինաբանության ուսումնասիրության բնագավառում մեծ ավանդ ունեն անվանի հայագետներ Յ. Կարստը, է. Զայդելը, Ղ. Ալիշանը, Ղ. Հովնանյանը, Կ. Բասմաջյանը, Կ. Գաբիկյանը, Ա. Սեպետյանը, Խ. Մելիք-Փարսադանյանը և ուրիշներ։ Հայ բժշկագետներ Մխիթար Հերացու, Գրիգորիսի, Ամիրդովլաթ Ամասիացու, Ասար Սեբաստացու բժշկագիտական աշխատութիւնների լեզվի և հատկապես օտար փոխառութիւնների հարցին անդրադարձել են Հ. Մուրադյանը «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» գրքում և Հ. Ամալյանը «Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձաններ» մեկնագրութիւնում։

Մեր ուսումնասիրության հիմքում ընկած է «Անգիտաց անպէտի» բժշկական ու բուսաբանական տերմինների վերլուծութիւնը, սակայն անհրաժեշտութեան դեպքում, մասնավորապես աղճատված բնիկ և օտար բառերի ճշգրտման նպատակով, հաճախ դիմել ենք Ամասիացու այլ աշխատութիւններին։

«Անգիտաց անպէտի» բժշկական ու բուսաբանական տերմինների շերտում, ինչպես ցույց տվեցին մեր հետազոտության արդյունքները, կան մոտավորապես 800 բնիկ հայերեն բառեր։ Սրանց շարքում յուրահատուկ տեղ են գրավում խոտերի ու ծառերի այնպիսի անվանումներ, որոնք կապված են պատմական անձնավորութիւնների, ինչպես նաև առասպելական հերոսների հետ։ Սրանք մուտք են գործել գիտական տերմինաբանության մեջ բանահյուսութիւնից²։ Այսպես, օրինակ, մալմնատակը (Mandragora), որը, ըստ ժողովրդական հավատալիքների, օժտված էր հրաշալի հատկու-

¹ Ա մ ի Ր դ ո վ լ ա թ Ա մ ա ս ի ա ջ ի. Անգիտաց անպէտ, խմբ. Կ. Բասմաջյանի, Վիեննա, 1926, էջ 3։

² Կ. Մ ի լ ի ր - Օ հ ա ն ջ ա ն. Միթրա-Միհրը «Սասնա ծռերի մեջ».— Գլտական-բանասիրական հետախուզումներ, գ. 1, Երևան, 1940, էջ 209։

թյուններով, կոչվում էր «Սողոմոնի իմաստնոյ ծառ»։ Համաձայն ավանդու-
թյան, րիբլիական թագավորն այն կրում էր մատանու ակի տակ. հենց այդ
պատճառով էլ, ինչպես գրում է Ամասիացին, «ամենայն զազանք և անա-
սունք նորա հրամանքն էր, և իշխանութիւն կառնէր ամենայն զազանաց և
անասնոց»³։ Բիբլիական մեկ այլ հայտնի անձնավորութեան՝ Դավիթ մար-
գարեի անունով «Դավիթ մարգարէի մեղր» էր կոչվում որոշ ծառերի, այդ
թվում եղևնու խեժը (Elaeomel), որը միջնադարյան հայ բժշկութեան մեջ
կիրառվում էր որպես մաշկի և աչքի հիվանդութիւնների համար պիտանի
դեղանյութ⁴։ Գրիգոր Լուսավորչի և Մարիամ Աստվածածնի անունն էր կրում
խնկողկզուկը (Tenuarium polium)։ «Սուրբ Գրիգորու ծառը» կամ «մարեմ-
խոտը» միջնադարյան հայ բժշկապետները հույժ օգտակար էին համարում
լլարդի ու փայծաղի հիվանդութիւնները բուժելու, ինչպես նաև «միտքն և
աչքն սրացնելու» ու «մահացու դեղոց» վնասն փարատելու համար⁵։ Նշված
փաստը բացահայտում է հայկական բուսաբանական տերմինաբանութեան
ժողովրդական արմատները։

Ամիրգովյաթ Ամասիացու բժշկական տերմինաբանութեան վերլուծու-
թյունը, որը կազմում է նրա բառապաշարի մասնագիտացված մասը, հնա-
րապետութիւն է տալիս կարևոր եզրակացութիւններ հանգել նրա լեզվի
մասին։ Ամասիացին իր գործերը շարադրել է ժամանակի խոսակցական
լեզվով՝ միջին հայերենով։ Սակայն եթե նրանից երեք դար առաջ ապրած
հայ բժշկապետի՝ Մխիթար Հերացու երկերում դեռ ուժեղ էին գրաբարի տա-
րերը⁶, ապա «Անգիտաց անպէտի» լեզվի հնչյունաբանութիւնը, ձևաբանու-
թիւնը և շարահյուսութիւնը հիմնականում արտացոլում են միջին հայերե-
նին բնորոշ օրինաչափութիւններ⁷։

Այս երկի բժշկագիտական ու բուսաբանական տերմինների հայկական
բառաշարը մասամբ անփոփոխ ձևով գրաբարից անցել է միջին հայերենին,
մասամբ էլ կրել վերջինիս հատուկ հնչյունաբանական փոփոխութիւններ։
Այսպես, օրինակ, Ամասիացու մոտ բույսերի, կենդանիների և հանքային
նյութերի հետևյալ անվանումները պահպանել են իրենց գրաբարյան ձևը՝
աղտոտ, բողկ, գառնալեղու, գինձ, դաղձ, եղևին, իշաքեղ, խաչափայտ, ծնե-
բեկ, ծոր, կաղին, ձագախոտ, փշատ, օձ, առյուծ, գորտ, մեղու, մեղր, աղ,
արծաթ և այլն։ Սրանց կողքին հանդիպում են գրաբարից եկող բառերի,
որոնք հնչյունափոխված են միջին հայերենի բարբառների ազդեցությամբ
ձայնավորների սղմամբ, հերթագայութեամբ, երկրարբառների պարզեցմամբ,
ինչպես նաև բաղաձայնների տեղաշարժով, անկմամբ, հավելմամբ, ամ-
փոփմամբ և դրափոխութեամբ։ Այսպես, օրինակ, «ծրծրունուկ» և «ծրծրո-
նիկ» տարբերակներն առաջացել են դասական «ծիծեռն» ու «ծիծառն» ձե-
վերից «ակ»-«ուկ» ածանցների հավելումով։ Մի շարք տերմիններ Ամասիա-
ցու գործերում երևան են հանում «իւ» և «եա» երկրարբառների պարզեցու-
մբ. օրինակ՝ «արունքար», «աղբրաց արուն», «ձունծաղիկ», բարձունենեկ»,
սարեկ» և այլն։

Վերահիշյալ բառերից բացի, «Անգիտաց անպէտում» հանդես են գալիս
նաև նոր տերմիններ, որոնք հատուկ են միայն միջին հայերենին ու նրա
բարբառներին. օրինակ՝ խէշփար (գրաբարում՝ խեցգետին), խոթիկ (գրա-
բարում՝ ծիրան), ծափկոտրուկ (գրաբարում՝ պուտուկոտրուկ), տրէ (հայ-
վայի տեսակ) և այլն։ Գրաբարյան երիցուկը միջին հայերենում հնչյունա-

³ Ա մ ի ր գ ո Վ լ յ ա թ Ա մ ա ս ի ա ջ ի. Անգիտաց անպէտ, էջ 269։

⁴ Նույն տեղում, էջ 35։

⁵ Նույն տեղում էջ 326։

⁶ Ս. Վարդանյան. Հայ բժշկական տերմինաբանութիւնը XII դարում.—«Բանբն
[Մատենադարանի], № 10, 1971, էջ 185—212։

⁷ J. Karst. Historische Grammatik des Kilikisch-Armenischen. Strassburg, 1901,
S. 4. Ս. Ա. Վարդանյան. Հայոց լեզվի պատմութիւն. հ. 2, Երևան, 1951, էջ 226—254։

փոխություն պատճառով դարձել էր իրիցուկ, որի կողքին «Անգիտաց անպէտում» հանդիպում է «կոտոուրի» բառը նույն նշանակությամբ: Կարստը այն համարել է փոխառություն վրացերենից⁹:

Ամասիացու երկերի բժշկական տերմինների ուսումնասիրությունը ցույց է տալիս այն մեծ փոփոխությունները, որ կրել էին բաղաձայնները միջին հայերենում: Փաստերը համոզել ձևով խոսում են խուլ և ձայնեղ հայկականների համակարգային տեղաշարժի մասին, որն արձանագրված է հիմնականում օտար փոխառություններում, սակայն տեղ-տեղ հանդես է գալիս նաև բնիկ հայերեն տերմինների հնչյունաբանական տարբերակներում, ավանդական ձևերի կողքին: Սեղանից առաջ Հ. Մուրադյանը, ուսումնասիրելով Ամասիացու վաղ շրջանի գործերից մեկը, հանգել է այն եզրակացության, որ, ի տարբերություն կիլիկյան եռաստիճան համակարգի, հայ բժշկականագետի լեզվին հատուկ է երկաստիճան խլաղուրկ բաղաձայնական համակարգը: «Երկաստիճան խլաղուրկ համակարգը, մեզ թվում է,—գրում է նա,—ընկած է միջնադարյան հայտնի բժշկի Ամիրդովյաթ Ամասիացու «Ուսումն րժշկութեան» հեղինակային բնագրի (Մաշտոցի անվան Մատենադարանի 8871 ձեռագիր, գրչության թվ. 1459) հիմքում: Այս ձեռագիրը թեև բաղաձայնների արտահայտման մեջ հանդես է բերում ավանդական գրության պահպանման միտում, բայց որոշ բառաձևեր, այնուամենայնիվ, մատնում են նրա հեղինակի խոսած լեզվի հիմքում ընկած բաղաձայնական համակարգի էությունը: Այդ ձեռագրում հայերենի շնչեղ-խուլ հնչյուններից մի քանիսը արտահայտվում են ինչպես իրենց համապատասխան, այնպես և հին ձայնեղներն արտահայտող տառերով: Այսպես օրինակ՝ բառակցքում գրության մեջ շփոթվում են «թ» և «դ» տառերը, ինչպես թռչել՝դռչել, թռչոց՝դռչոց, փորձել՝բորձել, թափալ՝գափալ բառերում»¹⁰:

Ուսումնասիրողն իր թեզը հաստատում է նաև օտար փոխառություններում ձայնեղ հայկականների շնչեղ-խլացման փաստերով, օրինակ՝ հաքիմ՝ հադիմ, դուքամ՝դուգամ և այլն:

Ժամանակին այս երևույթները գրավել էին Կ. Բասմաջյանի ուշադրությունը: Սակայն անվանի հայ բժշկապատմաբանը, ցավոք, անտեսել էր միջին հայերենին բնորոշ վերոհիշյալ տարբերակները, համարելով դրանք լուրջ սխալ ուղղագրության արդյունք: Իր կողմից հրատարակած «Անգիտաց անպէտի» առաջարկում նա գրել է. «Ուղղագրության մասին անհոգ է Ամիրտովյաթ. օրինակ՝ «դերդ» գրած է «գէտ», «խեւ»՝ «խէվ», «ձուք»՝ «ձուք», «եքբ»՝ «եփ», «ցրդի»՝ «ձրթի», «թրջել»՝ «դրջել», «թմրեցնել»՝ «դմրեցնել», «թարգման»՝ «թարգման», «փտած»՝ «փթած», «բարք»՝ «բառք», «դուրս»՝ «դուս», «շոգի»՝ «շոքի», «զարնել»՝ «զայնել», «անթտակ»՝ «անդտակ», «սընկան»՝ «սնկան», «փայծղան»՝ «փայծղան» և այլն, իսկ ու-ով գրվելիք շատ կարևոր բառեր գրած են «վ»-ով, ինչպես՝ «ըխտավորութիւն», «պատեղվոր», «լվանալ», «ցրվել» և այլն: Աստիճան զատ «գ» դիմորոշ հոգն առհասարակ գրված է «տ»-ով: Արդ, այս բոլորը կարևոր համարեցի սրբագրեց ներկա հրատարակության մեջ»¹⁰: Այսպիսով, միջին հայերենի հնչյունաբանության համար շահագնաց կարևոր փաստեր չեն արտահայտվել «Անգիտաց անպէտի» տպագիր բնագրում, ուստի նրա լեզվի հարցերն ուսումնասիրելիս անհրաժեշտ է դիմել ձեռագրերի օգնության:

Մեր տերմինաբանական վերլուծության ընթացքում չբավարարվելով Բասմաջյանի կողմից հրատարակած բնագրով, հաճախ դիմել ենք «Անգիտաց անպէտի» ձեռագրերին (Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռ. № 414, 460, Բրիտանական գրադարանի № 3712 ձեռագրի լուսանկարչական

⁹ J. Karst. Wörterbuch des Mittelarmerischen (Մաշտոցի անվ. Մատենադարան, Յ. Կարստի ֆոնդ):

¹⁰ Հ. Մուրադյան. Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության. հ. Ա, Երևան, 1972, էջ 122:

¹⁰ Ամիրդովյաթ Ասասիացի. Անգիտաց անպէտ, առաջաբան, էջ ԺԲ:

պատճեն)։ Ստացված տվյալները հաստատում են Հ. Մուրադյանի եզրակացությունն Ամասիացու լեզվի հիմքում ընկած երկաստիճան խլազուրկ բաղաձայնական համակարգի մասին։ Այսպես, օրինակ, արաբական ու պարսկական փոխառություններում *b*, *g*, *d* ձայնեղ հպականները տառադարձվել են հայերենի «պ, կ, տ» տառերով, որ խոսում է վերջիններիս ձայնեղացման մասին. պապունաճ—babuna], պարանճասիֆ—birinjāslī, ամամ—dam, արամաք—dārmak, կավզուպան—gavzaban, կադան կուպին—gazan gabīn (տե՛ս աղյուսակ 1)։

Ենչեղ հպականները, ըստ մեր տվյալների, չեն ենթարկվել փոփոխության, որն արտահայտվում է այդ շարքի համապատասխանությունը հայերենի «փ, ք, թ» բաղաձայններին արաբական ու պարսկական փոխառություններում. օրինակ՝ փարսիսաշան—parsia všan, փանճանկուշո—panjan-kuš, թիսյն—tibn, թարանճուպին—taranjubīn, քապիլաճ—kabikaj.

Ինչ վերաբերում է ձայնեղ հպականների շարքին, ապա այն ենթարկվել է շնչեղ-խլազման և գրություն մեջ արտահայտվել է ոչ միայն ավանդական «փ, ք, թ», այլ նաև նոր արժեք ստացած «բ, գ, դ» տառերով, ինչպես այդ մասին վկայում են վերոհիշյալ օրինակները «Անգիտաց անպէտից»՝ «ձուգ||ձուք, երբ||նփ, թրշել||դրշել, թմրեցնել||դմրեցնել, թարգման||թարգման, շոգի||շոքի և այլն։ Օտար փոխառություններում այս տեղաշարժն արձանագրված է հետևյալ ձևով. լատիներեն և հունարեն բառերում *p*, *k*, *t* խուլ հպականները մեծ մասամբ տառադարձվել են ոչ թե հայերենի «փ, ք, թ», այլ «բ, գ, դ» տառերով, որոնք վերոհիշյալ տեղաշարժի պայմաններում ավելի լավ են արտահայտել այն թույլ շնչեղացումը, որը բնորոշ է լատիներենում և ոչ հնչյուններին. օրինակ՝ բաբավրիս—Papaveris, դեռա սիճիլադա—Terra sigillata, մասդիքս—Mastix (տե՛ս աղյուսակ 2)։ Լատիներենի շնչեղ խուլ «eth»-ն նույնպես տառադարձվել է «դ»-ով, օրինակ՝ անէդոյմ—Anethum, սադիրիաւն—Sathyrion, սիկինանդոս—Schoenanthus։

«Անգիտաց անպէտի» օտար փոխառությունների վերլուծությունը երկաստիճան խլազուրկ բաղաձայնական համակարգից դուրս հայտնաբերեց նաև այնպիսի գրավոր տարբերակների առկայությունը, որոնց կարելի է դասել անտեղաշարժ եռաստիճան համակարգի մեջ։ Այսպես օրինակ՝ որոշ դեպքերում լատիներեն խուլ հպականները «Անգիտաց անպէտում» տառադարձվել են հայերենի համարժեք «պ, կ, տ» տառերով՝ պիպերի—Piperi, կանաբիս սէմէն—Cannabis semen, կալիանդրում—Coriandrum, կոլոկիսալ—Colocythis և այլն։ Իսկ պարսկերեն ու արաբերեն ձայնեղները համապատասխանաբար տառադարձվել են հայերենի «բ, գ, դ» տառերով. օրինակ՝ «պապունաճի» կողքին տեսնե՛ք նաև «բաբունաճ», «տիֆլալի» կողքին՝ «դիֆլա»—Difla, «արշիշլանի» կողքին՝ «դարշիշլան»—Daršišlān։ Այս տարբերակները կարող էին մտածել տալ անտեղաշարժ եռաստիճան բաղաձայնական համակարգի մասին, եթե չկրեին այդքան պատահական բնույթ բազմաթիվ այնպիսի ձևերի կողքին, որոնք պարզ խոսում են երկաստիճան խլազուրկ համակարգի օգտին։ Մեր կարծիքով, այդպիսի հազվագյուտ դեպքերում պետք է մտածել ոչ թե ինչ-որ նոր բաղաձայնական համակարգի, այլ նույն երկաստիճան խլազուրկ համակարգի սահմաններում տրանսլիտերացիայի (գրադարձություն) սկզբունքի մասնակի դրսևորման մասին, որ հաճախ հանդիպում է բառարաններում։ Այս առումով մեզ համոզիչ չի թվում Հ. Մուրադյանի փաստարկը անտեղաշարժ եռաստիճան բաղաձայնական համակարգի մասին, որին նա հանգել է ուսումնասիրելով Մաշտոցի անվան Մատենադարանի № 7151 ձեռագրում պահպանված հայատառ արաբերեն-պարս-

Արաբերեն ու պարսկերեն բառերի տառադարձությունը բնականորեն

Արաբերեն գրույ	Ֆառաքար- ձուլում բնականորեն	Հայերեն գրույ	Օրինակներ Ամերիկայի և Անգլիայի անվանումներ
ալիֆ	a	ալիֆ	alif—ալիֆ, anjöl—անգլի
բա	b	բա	izalr—իզալ, umm al-kalb—ում ալ կալ, bābūnaj—բաբունա, birinjāsif—բիրինյասիֆ
պէ	p	պէ	parsiyavuşān—պարսիկական, pan-jangust—փանջանյան
տա	t	թո	tibn—թիֆ, taranjubīn—թարանյան
չիմ	s	սէ	sa:mir—սամիր, sūm—սում
չի	j	ճէ	jāvār—ճավար, jadvar—ճավար
հա	h	հա	ceş rak—չեսրակ, cogondar—չոնդար
դա	ḥ	խէ	ḥadīd—հադիդ, ḥalbūb—հալբուբ
զա	z	զա	zāfī—զաֆի, zuza:ra—զուզարա
զա	d	ձա	darmak—դարմակ, difla—միֆլա, daršīšan—դարշիշան
զա	z	զա	difla—միֆլա, daršīšan—դարշիշան
զա	z	զա	zibī—զիբի, zura:q—զուրազ, zura—զուրա
զա	r	ռա	ra:an—ռան, ribriq—ռիբրիկ
զա	z	զա	rajanin—ռանյան, ra:abin—ռաբին
սին	s	սէ	zī:an—զիան, zift—զիֆ, zarnix—զարնիք
չին	š	շա	sar:as—սարաս, sult—սուլթան, sa-zāb—սազաբ
սազ	š	սէ	šādānā—շադանա, šahbānak—շահ-պանակ
զազ	z	զա	ša:tar—սաշթար, šarimat al-jadī—սարիմաթ լի ճահի
ռա	z	զա	zay:nurān—զանյան, zirm—զուրմ
ռա	ṭ	տա	zafada—զաֆադա
զա	z	զա	ṭuḥlūb—տուխլուբ, ṭabaq—տապակ
աչն	c	հի	ṭin-l a:atūm—տին-լ ա:ատում
զա	z	զա	ṭin-l a:atūn—տին-լ ա:ատուն
աչն	c	հի	zayyan—զայյան, zimmi:q—զիմիկ
զա	c	հի	'aj—յակ, 'asal—յասալ, 'a:qab—յազաբ
զա	g	զա	ša:tar—սաշթար
զա	f	ֆէ	galliya—գալիյա, gār—գար
զա	f	ֆէ	fūšāg—ֆուշագ
զա	q	զա	fušāg—ֆուշագ, faranjamušk—ֆարանյան
զա	q	զա	cašab—չասաբ, qana—զանա, qa-quilla—զազուլ
զա	k	կէ	arba:—արաբա
զա	k	կէ	qaquilla—զազուլ
զա	k	կէ	kirkir—կիրկիր, fazvan—ֆազվան
զա	k	կէ	kabikaj—կաբիկա, kalb—կալբ
զա	g	զա	kašnaj—կաշնայ
զա	g	զա	gāvzabān—գավզաբան, gazan ga-bin—գազան
զա	l	լա	lu'lu'—լուլու, lūf—լուֆ
զա	m	մա	milb—միլբ
զա	m	մա	matārat al-dubb—մարաթալ լի
զա	n	նա	amūq, n auz—մազ
զա	n	նա	nīl—նիլ, nūhā—նուհա, nam:am—նամամ
զա	v	վա	vabar—վաբար, v arš—վարս
զա	h	հա	gā. zabān—գազաբան
զա	y	հա	hāluk—հալուկ, hīlayūn—հայլուն
զա	y	հա	yarba:ūr—յարպաուր, ya rūb—յա-զուլ

Պարսկերեն բառերում կիրառվում են նաև պէ, չէ և զաֆա գրերը

կերեն-հայերեն բառարանի մի պատահիկ¹¹։ Այստեղ արաբերեն ու պարսկերեն ձայնեղ հպականների համապատասխանությունը հայերեն «բ, զ, դ» տառերին, ինչպես «Անգիտաց անպէտում», ավելի շուտ խոսում է բառարանում կիրառված գրադարձության սկզբունքի մասին։ Անշուշտ, բացառված չէ, որ մեզ դեռևս անծանոթ սկզբնաղբյուրներում կարելի է գտնել համոզիչ փաստեր միջին հայերենում անտեղաշարժ եռաստիճան համակարգի գոյության օգտին։

Ա Ղ Յ Ո Ս Ա Կ 2

Հունա-լատիներեն բառերի տառադարձությունը ըստ Ամիրզոյի

Հունա-լատիներեն բառեր	Օրինակներ «Անգիտաց անպէտից»	Օրինակներ «Անուանք դեդերոյ» բառարանից
Acorus	ակառոյս	անէդում
Anethum	անէդոյմ	արիսգովլօճիայ
Aristolochia	արիսգալաճիայ	պալսամի
Balsamum	պալսամի	դանարիս սէմէն
Cannabis semen	կանարիս սէմէն	դաբիլում վէնէրիս
Capillum veneris	դամիլում վէնէրիս	դալալազինդիսայ
Colocynthis	կօյոկիսայ, կօյօկնդին	կօլիանդրում
Coriandrum	կալիանդրում	էրիգիմում
Epithymum	էպիտիմոն	էօյֆաւրպիում
Euphorbeum	ֆարֆիում	կալպանում
Galbanum	կալպանում	ճիպսում
Gypsum	ճիպսում	էլէպաւրում
Helleborus	էլէպաւրում	իդոքոյս ոյմիտա
Hyssopus humida	իդոքոյս ոյմիտա	ճոյճոյպէ
Jejuba/fr. Jejubier	ճոյճոյպէ	լալուրի
Laurus	լալուրի	լիդոքիսիայ
Liquiritia	լիդոքիսիայ	եասպէրմաթաւ
Lithospermum	եասպէրմաթաւ	բաբալրիս
Paraver	բաբալրիս	բիբէր
Piper	պիպերի	ցոյդարայ
Saccharum	զախարի	սառաբինում
Sagapenum	ոարին/ազալադ. սագա- բինում	սադրիան
Sathyrlon	սադրիան	սէմբեր վիվա
Sempervivum	սիմպերվիվու	սկինանդում
Schoenanthus	սիկինանդում	դէրա սիճիլադա
Terra sigillata	դէրա սիճիլադա	

Միջնադարյան հայ բժշկական տերմինաբանության մեջ կիրառվող օտար փոխառությունները մուտք են գործել մեր լեզվի մեջ տարբեր պատմական շրջաններում։ Սրանց մի մասն այնքան վաղուց է անցել հայերենին և մերվել նրա հետ, որ այլևս չի ընկալվում որպես օտար տարր։ Վերահիշյալ հնագույն փոխառությունների շերտի մեջ հատկապես մեծ է պահլավերեն բառերի տեսակարար կշիռը, որոնք ժամանակին զգալի չափով հարստացրին գրաբարի բառապաշարը և շարունակում էին կիրառվել միջին հայերենում։ Որոշ բույսերի, թռչունների, կենդանիների և սրանցից պատրաստած սննդանյութերի ու դեղանյութերի անուններն ունեն պահլավական ծագում՝ սպանդ, կնճութ, խունկ, կնդրուկ, սերկէի, սոխ, լեղակ, բազե, սիրամարգ, մորեխ, տզրուկ, գոմեշ, ապուխտ, կարագ, մոմ և այլն։

Այս հնագույն շերտում երկրորդ տեղն են գրավում հունարեն բառերը, որոնք կարևոր դեր էին խաղացել հայ գիտական տերմինաբանության կազմավորման և հարստացման գործում, հատկապես հունաբանների գործունեության շրջանում։ Բժշկական տերմինաբանության մեջ սրանցից անցել են հետևյալները՝ մարգարիտ, զմրուխտ, պորփիր, բալասան, կաղամբ, կիպարի, կիպերիս, սանդալ, սապոն, տարիխ, կոկորդիլոս և այլն։ Գրաբարի

11 Հ. Մ ու բ ա դ յ ա ն. նշվ. աշխ., էջ 119։

ըրջանում հայերենի մեջ մտան նաև բազմաթիվ ասորերեն բառեր՝ բույսերի, կենդանիների և հանքային նյութերի անվանումներ. օրինակ՝ ծաթրին, թուֆ, տերևատ, խլուրդ, կուղք, ծարիր, ձուֆ և այլն:

Այս փոխառությունների վաղեմության մասին վկայում է այն փաստը, որ սրանցում չի արձանագրված կիլիկյան հայերենում տեղի ունեցած բաղաձայնների տեղաշարժը, որը Կարստը համարում է փոխառության ժամանակը պարզելու կարևոր ցուցանիշ¹²։ Այսպես, եթե ձայնը և խոսք հպականների համակարգը պահպանվեն baza, kundruk բառերում համեմատենք հայերեն փոխառություններին հատ, ապա կնկատենք, որ սրանց տառադարձությունը կատարվել է առանց հնչյունների համապատասխանության խախտման։ Եւրեն էլ կարելի է տեսլ հունարեն crocodilos, balsamon, tarichos բառերի վերաբերյալ, որոնք անփոփոխ ձևով անցել են հայերենի մեջ, կորցնելով միայն իրենց հունարեն վերջավորությունները:

X դարից սկսած միջնադարյան հայ գիտական տեքմինաբանությունը հարստացավ արաբերեն ու պարսկերեն տեքմիններով։ Հունարենին իբրև գիտության լեզու այդ շրջանում իր տեղը զիջում է արաբերենին, ըստ որում հունարեն բառերը փոխառվում էին ոչ թե անմիջաբար, ինչպես այդ կատարվում էր հունաբանների օրոք, այլ միջնորդաբար, արաբացված ձևով։ Հենց այդ պատճառով էլ վերոհիշյալ բառերում միջին հայերենի բաղաձայնների տեղաշարժը գտել է իր գրավոր արտահայտությունը:

Ուսումնասիրելով «Անգիտաց անպետում» և Ամասիացու այլ աշխատություններում օգտագործված արաբերեն ու պարսկերեն բառերի տառադարձությունը (տե՛ս աղ. 1)՝ հանգել ենք հետևյալ եզրակացության. հայ բժշկապետը մշակել էր տառադարձության ֆոնեմատիկ (հնչութաբանական) համակարգ, որի նպատակն էր արտահայտել օտար բառերի ոչ միայն գրավոր ձևը, այլև արտասանությունը։ Որոշ դեպքերում էլ նա դիմել է ուղղակի գրադարձության, այսինքն՝ ձգտել է պահպանել փոխառյալ բառերի միայն արտաքին տեսքը։ Այս երկու սկզբունքներն էլ դրսևորվել են աղյուսակում։ Ամասիացու տառադարձության հնչութաբանական համակարգը հնարավորություն է տալիս պարզ տեսնել ոչ միայն ձայնը ու խոսք հպականների համակարգային տեղաշարժը, այլ նաև առանձին բաղաձայնների հնչյունափոխության կանոնները միջին հայերենում։ Այսպես, օրինակ, արաբերեն ու պարսկերեն փոխառյալ բառերում արձանագրված է հայերենի «ղատ»-ի հնչյունափոխությունը ձայնորդից ձայնը շփականի, որի լծորդն էր խոսք «խե» շփականը։ Արաբերենի «ղայն»-ը այդ բառերում հիմնականում տառադարձվել է հայերենի «ղատ»-ի միջոցով, իսկ բառավերջում՝ առաջին «ղե»-ով՝ gāliya—դուխ, gār—դար, fuṣā—ֆուսխու։ Արաբերեն ու պարսկերեն փոխառություններում իր գրավոր արտահայտությունն է ստացել նաև «հի» կիսաձայնի հնչյունափոխությունը բառակզրում «հո» շփականի։ Այսպես, օրինակ, արաբերենի «յա»-ն փոխառյալ բառերում տառադարձվել է ոչ թե հայերենի «հի»-ի միջոցով, այլ «եա» երկբարբառով, yarbātūr—հարպաաուր, yaqūb—կադուպ։ Վերջինս պարզ ցույց է տալիս, որ բառակզրում «հի»-ն արդեն չունի իր նախկին արտասանությունը և նրա տեղը բռնել էր «եա» երկբարբառը։ Հնչյունափոխված այս «հի»-ն արաբերեն ու պարսկերեն փոխառյալ բառերում օգտագործվում էր բառակզրում արաբերեն «այն»-ի տառադարձության ժամանակ, իսկ բառամիջում՝ փոխարինվում «հո»-ով, օրինակ՝ 'a]—յա՛ն, 'asal—լասալ, §3'tar—սահթար։ Բառամիջում «այն»-ը գրադարձվում է նաև «հի»-ով՝ sa'lab—սալլապ, 'ar'ar—լարլար:

¹² J. Karst. Historische Grammatik Kilikisch-Armenisch, S. 31.

Ինչ վերաբերում է ձայնավորների տառադարձությանն արաբերեն ու պարսկերեն փոխառյալ բառերում, ապա այստեղ հաճախ հանդիպում ենք համապատասխանության կանոնների խախտման, որը, ըստ Կարստի, ոչ միայն անփույթ տառադարձության արդյունք է, այլ առաջին հերթին պայմանավորված է փոխառու լեզվի բարբառների ազդեցությամբ¹³։ Ձայնավորների համապատասխանության խախտման օրինակներ բերված են I աղյուսակում՝ անճիլ—anjol, պարանճասիֆ—birinjasiḡ, զուպլ—zibl, ասպոսխ—ribriq, սալաթ—sult, զուրում—zırm, տահլապ—tuḥlub, ֆաշախ—fuṣāḡ, կարկար—kirkir և այլն։

Արաբերեն ու պարսկերեն բառերը, որոնք միջնադարյան հայ բժշկաբաններում կազմում էին օտար փոխառությունների մեծամասնությունը, տառադարձության կանոնների խախտումներից բացի հաճախ երևան են հանում այլ կարգի աղավաղումներ։ Վերլուծելով այդ աղճատված տերմինները, մենք համոզվել ենք, որ աղավաղումը հիմնականում տեղի է ունեցել ոչ թե հայ գրիչների մեղքով (անշուշտ, նման դեպքեր բացառված չեն), այլ արաբերեն գրերի առանձնահատկության և մասնավորապես արաբատառ աղբյուրներում դիակրիտիկ նշանների սխալ տեղադրման պատճառով։ Այս հանգամանքի վրա ուշադրություն են դարձրել արաբական ու պարսկական «մուֆ-րադաթները» և «սայդանաները» (գեղագիտաբանների) ուսումնասիրողները¹⁴։ Բիրունու «Սայդանայի» թարգմանիչ Ու. Կարիմովը գրում է. «Առանց չափազանցության կարելի է ասել, որ «Սայդանայում» չկա գրեթե մի բաժին, որտեղ աղավաղված չլինեին առանձին տերմիններ, իսկ որոշ բաժիններում աղճատված են համարյա բոլորը»¹⁵։ Այս պարագաներում թարգմանչի և ուսումնասիրողի գործը հաճախ վեր է ածվում ուղղակի գլուխկոտրուկների վերծանման։

Միջնադարյան հայ բժշկագետները, այդ թվում նաև Ամիրդովլաթ Ամասիացին, աղճատված արաբերեն ու պարսկերեն բնագրերից օգտվել են առանց քննադատական մոտեցման։ «Անգիտաց անպէտում» հանդիպում ենք այս կարգի բազմաթիվ օրինակների։ Վերլուծենք սրանցից մի քանիսը։ Հեղձի բույսի (Anchonium DC) արաբերեն anas al-naḡas անվան փոխառեն հայերեն բնագրում ունենք աղճատված «անիս ըլ պաղս» ձևը։ Անկասկած, աղճատումը տեղի է ունեցել արաբերեն աղբյուրում «նուն» և «ֆա» գրերի շփոթման պատճառով «բա» և «կաֆ»-ի հետ։ Շփոթությունն առաջացել է «նաֆաս» բառում դիակրիտիկ նշանների սխալ տեղադրումից, մինչդեռ հայերենում անկարելի է շփոթել «պէս»-ն «նու»-ի կամ էլ «ֆե»-ն «դատ»-ի հետ։ Արաբերեն աղբյուրում է աղավաղվել նաև Euphorbia spinosa բույսի արաբերեն abū-qābis անունը, դառնալով abū-qānis, որը հետագայում Ամասիացու մոտ տառադարձվել է «ասպու դանիս»։ Կամ էլ միջնադարյան դեղագիտության մեջ հայտնի, իսկ այժմ մոռացված հանքանյութի արաբերեն ḡajar al-būls առնչը (բառացի՝ Պողոսի քար) աղավաղվելով մուֆրադաթներում դարձել է ḡajar al-yūnuṣ, ըստ որում երկու ձևն էլ հանդիպում են «Անգիտաց անպէտում»՝ «հաճար ըլ պուլաս» և «հաճար ըլ եռնուս»։ Մի այլ հանքային դեղանյութի՝ խեցքարի արաբերեն անունը՝ ḡajar al-xazafī «խա»-յի և «զա»-յի վրա դիակրիտիկ նշանի բացակայության պատճառով արաբական աղբյուրում դարձել է ḡajar al-ḡarafī և այնուհետև միջին հայերենում տառադարձվել «հաճար ըլ խազաֆի» և «հաճար ըլ հարֆի» ձևվերով։ Այծտերևուկի (Lonicera periclymenum) արաբերեն ṣarīmat al-jadī

¹³ Նույն աեղում, էջ 39—40։

¹⁴ C. E. Dubler. Los nombres arabes de Materia medica en la obra del doctor Laguna. Al Andalus, 1951, 16, 141—164.

¹⁵ Берукин. Избранные произведения, т. IV, Саидана, Ташкент, 1974, с. 117.

անունը «շիմա»-ի վրա դիակրիտիկ նշանի բացակայությամբ պատճառով արաբական աղբյուրում դարձել է *šarimat al-hadl*, ըստ որում երկու ձևն էլ՝ ուղիղն ու աղճատվածը, հանդիպում են Ամասիացու մոտ (սասրիմաթ ըլ ճատի» և «սասրիմաթ ըլ հատի»):

Հետաքրքրական է նշել, որ այս ճանապարհով առաջացել են դեղանյութերի այսպես ասած ընդհանուր անուններ: Ժամանակի ընթացքում սրանց կապը ուղիղ ձևի հետ մթափնել է և վերջիններս սկսել են ընկալվել որպես տարբեր դեղանյութերի անուններ: Նշված երևույթը, որը հատուկ էր արաբական ու պարսկական դեղագիտաբաններին, իր արտահայտությունն է գտել նաև միջնադարյան հայ բժշկարաններում, որտեղ անցել են վերոհիշյալ փոխառյալ տերմինները: «Անգիտաց անպէտում» կան բազմաթիվ բաժիններ, որոնք իրենցից ներկայացնում են փոխառյալ արաբերեն կամ պարսկերեն տերմինի ճշգրիտ ու աղավաղված ձևերի մեկնաբանությունը, որը գրեթե համընկնում է: Այսպես, խեցքարի կամ «հաճար ըլ խաղաֆի»-ի մասին «Անգիտաց անպէտում» ասված է. «Ընքն քար մըն է, որ բրտնուն շոխին պես ճեղք ճեղք կու լինի. և ի յնգիպտոս խրղմալի տեղ ի գործ կու արկանեն, եւ թէ ղր դրամ գինով տրորեն եւ խմեն՝ ղհայդին արունն կտրէ: Եւ թէ կանայք լիսակելուն ետեւ մինչեւ Դ աւր՝ ամէն աւր Ա դրամ խմեն, զպատեղորոթիւնն խափանէ: Եւ թէ մեղրով խառնես, որոյ ծիծն ուռի՝ ղնես, աւգտէ»¹⁶: Համարյա նույն բնութագիրը տրվում է «Անգիտաց անպէտում» «հաճար ըլ հարֆի» կոչված դեղանյութին. «Ընքն քար մըն է, որ ի Մսր կու լինի: Եւ ինքն ի հարֆ կու նմանի: Եւ շատ կու ճղքի. եւ տակ տակ է, գերդ կեղեւ. ինքն ղմաղն կածիլէ. եւ թէ Բ դրամ յիրմէն տրորեն եւ գինով խմեն, ղհայդին արունն կտրէ: Եւ թէ մեղրով շաղեն եւ ի վերայ ծծին ուռէցին ղնեն՝ զխոցն աղէկցնէ ու գուռեցն տանի եւ շորացնէ»¹⁷:

Մեկ օրինակ ևս. *ծովեզրյա մկնասոխի* (*Pancratium maritimum*) արաբերեն *qabai* անունը և նրա աղավաղված ձևը միջին հայերենում տառադարձվել են որպես «ղայյապլ» և «ղաղպալ»: «Անգիտաց անպէտում» այս երկու անունների տակ տրվում է նույն բույսի նկարագրությունը (էջ. 287, 291), որն ինքնին խոսում է վերոհիշյալ տերմինների միջև եղած կապի թուլանալու մասին: Անկասկած, Ամասիացու նման հմուտ բառարանագետը պիտի խուսափած լիներ նման կրկնողություններից, եթե ընկալեր այդ տարբերակները որպես միևնույն դեղանյութի անուն: Բայց դա արգեն ենթադրում է քննադատական վերաբերմունք շատ հեղինակավոր արաբական կամ պարսկական աղբյուրի նկատմամբ, որը դեռ բացակայում էր միջնադարյան աղբյուրագետների մոտ:

Բնիկ և օտար տերմինների աղավաղումը ձեռագիր հայ բժշկարաններում որոշ դեպքերում տեղի է ունեցել հայ գրերի շփոթման պատճառով: Օրինակ, ուզտի պարսկերեն անունը՝ *šotor*, «Անգիտաց անպէտում» տառադարձվել է «շթուր» ձևով, որը սակայն որոշ գրչագրերում հայերենի «շա» և «ղոտա» գրերի նմանության պատճառով դարձել է «ղթուր»: Յուրօրինակ փոփոխությունների է ենթարկվել ակնամոմի արաբերեն անունը *vasax al-kūz* (բառացի՝ փեթակի կ'զա), որն աղբյուրին բնագրում բառի վրա ստանալով ավելորդ գիակրիտիկ նշան դարձել է *vasax al-kūz*, իսկ այնուհետև միջին հայերենում տառադարձվել է որպես «վասախ ըլ կուզ» կամ «վասախ ըլ դուզ»: Վերջինս էլ *gūz* (ընկույզ) բառի հետ պաասական նմանության պատճառով հայ գրչի փոզմից ընկալվել է որպես «վասախ ընկզի», և այսպիսով առաջացել է «նոր» տեղմին, որի կապը ակնամոմի անվան հետ թուլացել է:

¹⁶ Ա մ ի Ր դ օ վ լ օ թ Ա մ աս ի ա ջ ի. Անգիտաց անպէտ, էջ. 281:

¹⁷ Նույն տեղում, էջ. 280:

Միջին դարերում, ինչպես և պարթևական շրջանում, պարսկերեն լեզուն շարունակում էր օգտագործվել հայ տերմինաբանության մեջ: Սակայն ոչ շրջանի պարսկական փոխառությունները հայ բժշկականներում հաճախ բերված են արաբացված ձևով: Այսպես, պարսկերեն mavīzak, marzangūš, palang-mušk բառերը տառադարձվել են արաբերենում mavīza], marzanjuš, faranjmuš-ի ձևերով, իսկ այնուհետև մտել են միջնադարյան հայ դեղագիտության տերմինաբանության մեջ: Միաժամանակ ոչ սակավ են այն դեպքերը, երբ արաբական տերմինն իր հերթին իրանացվել է և անցել միջնադարյան հայ տերմինաբանության մեջ այս անգամ ոչ թե արաբական «մուֆրադաթից», այլ պարսկական որևէ «Սալգանայից»: Ամասիացու դործերում հանդիպում են մի շարք արաբերեն տերմիններ, որոնց մեջ առկա է պարսկերենին հատուկ «ի» կամ «յի» իզաֆեթը՝ «ասալ ի Տաւուա» ('asal-i davūd), «զարուր ի ճապալի» (za'rūr-i jaball), «տին ի մախտում» (tīn-i maxtūm), «զուֆա լի ըռաուպ» (zūfā-yi ra'ib) և այլն: Արաբական տերմինների իրանացման մասին է խոսում նաև այն փաստը, որ Ամասիացու մոտ արաբերենի «դազ»-ը տառադարձվել է հայերենի «զա»-ի միջոցով (տես աղ. 1): Այսպիսով, փոխառյալ տերմիններն անցնելով աղբյուրից աղբյուր ենթարկվել են զանազան լեզուների քերականական կանոնների ազդեցության, որոնց հետքերը դեռ մնում են միջնադարյան հայ բժշկականներում:

«Անգիտաց անպէտի» հեղինակը, որը քաջածանոթ էր պարսկական աղբյուրներին, իսկ իր ճանապարհորդությունների ժամանակ ուսումնասիրել էր Պարսկաստանի մի շարք բարբառներ, հաճախ հիշատակում է դեղաբույսերի, կենդանիների ու հանքային նյութերի ոչ միայն գրական, այլև բարբառային անվանումները: Խոսելով դաշաալին կրիցուկի մասին (Anthemis arvensis) նա բերում է հետևյալ պարսկական անունները՝ 1. ախհաւան—aqhavān, 2. կավ շաշմ—av šāšm (բառացի՝ եզան աչք) 3. ահտաղ ըլ մարգաւաղաւաղ—ahdağ al-marz (բառացի՝ թռչունի բիր) 4. պապուհա լի կավ—babūna-yi gāv (Շիրազի բարբառով): Կամ էլ նկարագրելով վշենիկը (Linaria vulgaris) նշում է մի շարք պարսկական հոմանիշներ՝ 1. քիշնիճ ի քոհի—kišniz-i kūhī (բառացի՝ լեռնային գինձ) 2. թրյաք քոհի—tiryaq-i kūhī (բառացի՝ լեռնային թերիակէ) 3. պուլպուլ ի շաֆ—bābol-i šāmī (բառացի՝ սիրիական սոխակ) 4. քազառանկ—kazarak (Շիրազի բարբառով): Դեղաբույսերի և այլ դեղանյութերի պարսկական անունները, որոնք միջին դարերում մուտք էին գործել հայ բժշկական տերմինաբանության մեջ, ի տարբերություն վաղ շրջանի պահլավերեն բառերի, հետագայում շարժառայան մեր լեզվում և փոխարինվեցին բնիկ հայերեն բառերով: Սրանց նմանությունը, պատճենավորման սկզբունքով, ստեղծվել են որոշ հայկական բուսաբանական ու բժշկագիտական տերմիններ:

Ինչ վերաբերում է հունարեն այն փոխառություններին, որոնք մտել են մեր լեզվի մեջ միջին դարերում, այսինքն բաղաձայնների տեղաշարժից հետո, ապա, սրանց մեծամասնությունը, ինչպես նշվեց, վերցված է արաբական աղբյուրներից և կրում է արաբացման կնիք: Անշուշտ, Ամասիացու դործերում հանդիպում են և որոշ հունարեն բառերի դասական ձևեր, օրինակ՝ ֆիլիտիս—Pnylitis, աստրոն—Asaron, էպիտիմոն—Epithymon, սակայն անհամեմատ ավելի մեծ է այն տերմինների թիվը, որոնք հանդես են գալիս արաբացված ձևով: Վերջիններս միջնադարյան արևելյան դեղագիտականներում հաճախ աղճատվել են արաբական դրուժյան առանձնահատկությունների պատճառով: Որինակ, ոսկի կղեզնի հունարեն անունը՝ Lysimachion արաբական աղբյուրում դուրձել է lusimaxiyās, վերջինս էլ գիտական լեզվի նշանի սխալ տեղադրման պատճառով տվել է lusimājiyūs ձևը, որը

Ամասիոցու կողմից տառադարձվել է որպես չլուսիմաճիուս: Վալրի ականթի հունարեն Sphondylion անունը արաբների մոտ դարձել է sfundūliyūn, որն այսօր ավելի տվել է squndūliyūn ձևը, իսկ սրանից առաջացել է հալկական ղեղադիտարանների «սղունտուլիոն»-ը, նույն պատճառով էլ «անգլիական խոտի» հունարեն Brethanice անունը «Անգիտաց անպէտում» տառադարձվել է պարտանիֆիա ձևով, որը կարող էր առաջանալ միայն այն դեպքում, եթե տեքմիքը հայերենին փոխանցվեր միջնորդաբար՝ արաբական աղբյուրից, որտեղ հեշտ էր շփոթել «կաֆ»-ը «ֆա»-ի հետ:

Հոնարեն տեքմիքները երբեմն այնքան են աղճատվել արաբական աղբյուրներում, որ կորցրել են իրենց կապը նախնական ձևերի հետ և նույնիսկ ստացել նոր իմաստ: Այսպես, Դիոսկորիդեսի Adarces տեքմիքը, որն անտիկ ղեղադիտարաններում նշանակում էր հատուկ դեղանյութ, այսպես կոչված «ծովի փրփուր»¹⁸, հետադադում արաբական «մուֆրադաթներում» դառնում է azarqūs կամ azarqls: Վերջինս Բիրունու «Մադանայում» ագտագործվել է աղտադտուկի կամ շոռանի (Salsola kali) նշանակությամբ¹⁹, Ամիրդովյաթի մոտ այն հոնդես է գալիս «ազարիդի» ձևով, որը նույնացվում է շան մահարարի անվան հետ (Apocynum erectum), մինչդեռ սրա կողքին հանդիպում է «ազարադիոն» բառը, որը շարունակում է արտահայտել Դիոսկորիդեսի տեքմիքի հին իմաստը²⁰: Մեր կարծիքով, շփոթությունն առաջացել է հունարեն Alcyonion (ծովի փրփուր) և Apocynon (շան մահարար) բառերի նմանությունից պատճառով: Այս երևույթը բավական հաճախ էր պատահում, իրր հոնարեն տեքմիքները փոխառվում էին արաբների կողմից: Օրինակ, մշտիկի հունարեն Hyssopos անունը արաբների մոտ տառադարձվել է zūfa ձևով: Սրան մոտ է լանդիլի հունարեն անունը՝ Oesypum, որը նույնպես արաբական «մուֆրադաթներում» դարձել է «զուֆա»: Իսկ որպեսզի այս դեղանյութերը մեկը մյուսից տարբերեն, առաջինը կոչել են zūfa yabls (բառացի՝ չոր դուֆա), երկրորդը՝ zūfa raḥib, այսինքն «գեճ դուֆա»:

Մի շարք բառեր միջնադարյան հայ ղեղադիտարաններում փոխառվել են ասորերենից: Սակայն սրանք գրաբարյան շրջանի ասորերեն բառերից տարբերվում են խուլ և ձայնեղ հպականների համակարգային տեղադարձով: Ամասիացիի հիշատակում է ալյուծաղու (Leontice leontopetalum) երկու ասորական անուն՝ maḥd և ‘artanlsa, ըստ որում առաջինի «d» հնչյունը հայերենում տառադարձվել է «տյուն»-ով, որ վկայում է խուլ հպականների ձայնեղացման մասին: Նույն օրինաչափությունները հանդես են գալիս նաև թուրքերեն փոխառություններում, որոնցում առկա է նաև ձայնավորների համապատասխանություն խախտում, որը, ինչպես արաբներն ու պարսկերեն տեքմիքներում, պայմանավորված է բարբառների ազդեցությամբ: Օրինակ, մրվանտակի (Asarum europaeum) թուրքերեն kedī otu անունը միջին հայերենում տառադարձվել է «քաթի օթու» ձևով, ընծախոտի (Aconitum anthora) թուրքերեն Pegamber çiçek անունը՝ «փեղանպար չիչակի» և այլն:

«Անգիտաց անպէտի» առաջաբանում Ամասիացիի նշել է, որ ինքն օգտորվել է «ֆոանկերի» զրքերից, այսինքն եվրոպական գրականությունից:

¹⁸ Pedacii Dioscoridis Anazarbaei. Fünftes Buch. Von allerlei Steinen, Frankfurt, 1610, S. 405.

¹⁹ Беруян. Садына, с. 206.

²⁰ Ամիրդովյաթ Ամասիացի. Անգիտաց անպէտ, էջ 30, 33.

XIV—XV դդ. Եվրոպայում ստեղծվում են դեղագիտարաններ ոչ միայն լատիններենով, այլ նաև ազգային լեզուներով՝ ֆրանսերենով և գերմաներենով²¹։ Լինինգրադում Սալտիկով-Շչեդրինի անվան հանրային գրադարանում պահվում են XV—XVI դդ. երկու հոյակապ պատկերազարդ հին ֆրանսերենով գրած ձեռագիր դեղագիտարաններ (F. V, VI, N 1,2)։ Վերջիններս, ինչպես ցույց տվեցին մեր ուսումնասիրության արդյունքները, պարզ դեղանյութերի բառարաններ են, որտեղ զգացվում է ոչ միայն Դիոսկորիդեսի «Materia medica»-ի, այլ նաև բյուզանդական ու արաբական ֆարմակոգնոգիաների ազդեցությունը։ Ի դեպ հիշենք, որ այդ դեղագիտական բառարաններում կիրառվող այբբենական սկզբունքը գալիս է ոչ թե Դիոսկորիդեսից, այլ հնագույն բյուզանդական դեղագիտաբանից, որը գրվել է VI դարի նկագրին Պոլսում և կոչվում էր «Պոլսի Դիոսկորիդես»։ Վերջինս Ամասիացու օրոք դեռ գտնվում էր Պոլսում, իսկ 1569 թ. վաճառվեց ֆոանկերին և այժմ պահվում է Վիեննայի ազգային գրադարանում, որտեղ հայտնի է որպես «Վիեննայի Դիոսկորիդես»²²։ Ապրելով Պոլսի բժշկական միջավայրում, որը սերտ կապեր ուներ Եվրոպայի հետ, Ամասիացին, անշուշտ, պիտի օգտված լիներ բյուզանդացիների ու «ֆոանկերի» գրքերից։ Հենց այդ շրջանում, եվրոպական գրականությունից ազատ օգտվելու նպատակով ստեղծվում են լատիններեն տերմինները մեկնաբանող հայերեն բառարաններ։ Անգիտաց անպէտից» մոտավորապես 40 տարի առաջ, 1438 թ. գրած «Հովհաննէս հաքիմի բժշկարանում» (Վիեննայի Մխիթարյան Մատենադարան, ձեռ. № 310) գետնղված է Անուանք ղեղերոյ» եռալեզվյան հայերեն-արաբերեն-լատիներեն բառարանը։ Կարստը ուսումնասիրեց ու հրատարակեց այն 1903 թ. «Zeitschrift für armenische Philologie» էջերում։

Վերլուծելով «Անգիտաց անպէտում» բերված «ֆոանկերին» բառերը և համեմատելով «Անուանք ղեղերոյ» բառարանի լատիններեն տերմինների հետ, մենք հանգել ենք այն եզրակացության, որ վերջինս եղել է Ամասիացու գործի հայկական աղբյուրներից մեկը։ (Օրինակները տե՛ս աղ. 2)։

Կատարված համեմատությունից պարզ երևում է, որ Ամասիացին իր մեծածավալ դեղագիտարանի «ֆոանկերին» տերմինները ստուգաբանել է վերոհիշյալ եռալեզվյան բառարանի միջոցով, ընայած ոչ մի տեղ չի հիշատակում իր հայկական աղբյուրը։ «Անուանք ղեղերոյ» բառարանի օգնությամբ մեզ հաջողվեց ճշտել «Անգիտաց անպէտի» որոշ աղավաղված «ֆոանկերին» տերմիններ և վերականգնել նրանց ուղիղ ձևը։ Ամասիացին գրում է սէքպինաճի մասին, որ այս բուսական խեղդի «լադինն ուարին ասէ»²³։ Իրականում սէքպինաճի լատիններեն անունը ոչ թե «ուարին» է, այլ Sagapenum։ «Անուանք ղեղերոյ» բառարանում սրա փոխարեն ունենք «սառաբինում» ձևը։ Վերջինս իրենից ներկայացնում է «սազաբինում»-ի կամ «սաղաբինում»-ի աղճատված տարբերակը, որն առաջացել է հայերեն «գիմ» կամ «դատ» գրերի շփոթության պատճառով «ոա»-ի հետ։ Իսկ «սաբինն» էլ իր հերթին «սառաբինում»-ի ավելի աղճատված ձևն է, փաստորեն նրա բեկորը։

Մի օրինակ ևս. չոր զուֆային կամ մշտիկին նվիրված բաժնում Ամասիացին բերում է աղավաղված «ֆոանկերին» «եղբաւտուս իմիտայ» բառը։ Մրա փոխարեն «Անուանք ղեղերոյ» բառարանում հանդիպում է «իզօրոյս ոյմիտա»—Hyssopus humida տերմինը. որը, սակայն, նշանակում է ոչ թե «չոր զուֆայ», այլ «գէճ զուֆայ» կամ «դալայ զուֆայ»։ Երկրորդ լատին (Oesypum)։ «եղբաւտուս իմիտայն» ծագում է անկասկած, «իզօրոյս ոյմիտա»-ից «զա» և «դատ» գրերի շփոթության, ինչպես նաև «բեն»-ի դրափո-

²¹ Л. И. Киселева, Западноевропейская книга XIV—XV вв. Л., 1985, с. 203.

²² K. Basmadjan, L'identification des noms des plantes du Code: Constantinopolitain de Dioscoride. Journal asiatique, 1958, 230, p. 578—621.

²³ Ամ իր.դ.ով.ա.թ. Ամասիացի. Անգիտաց անպէտ, էջ 527.

խոթյան ու «տյուն»-ի հավելման պատճառով, Հետաքրքրական է նշել, որ «Անուանք ղեղերոյ» բառարանում լատիներեն «սա»-ն humida բառում տառադարձվել է «ու» երկրարբառի միջոցով, մինչդեռ «Անգիտաց անպէտում» այն հանդես է դալիս որպես «իւ» երկրարբառ, որը ենթարկվելով պարզեցման դարձել է «ի» ձայնավոր, և այսպիսով միջին հայերենի «իմիտայ» ձևը բավականաչափ հեռացել է լատիներենի humida-ից: Լանոլինի լատիներեն փոխառյալ անունը վերոհիշյալ փոփոխությունների պատճառով ուղղակի անճանաչելի է դարձել և շփոթվել մշտիկի կամ շոր զուֆայի հետ, որին մեծապես նպաստել է նաև հունա-լատիներեն Oesypum և Hysōopum կամ Hysōopus բառերի միջև եղած վերահիշյալ նմանությունը:

«Անգիտաց անպէտում» բերված մոտավորապես 30 «ֆոանկերեն» բառերի մեծ մասը կազմում է լատինացված հունարեն տերմիններ՝ ակառոս—Acorus, անէլում—Anethum, պալուամի—Balsamum, էպիտիմոն—Epithymum, էլէպարոս—Helleborus, սիկինանդոս—Schoenanthus, սադիրիոն—Sathyrion և այլն: Վերահիշյալ տերմիններն «Անգիտաց անպէտում» համարվել են փոխառություն «Ֆոանկերենից», այսինքն հին ֆրանսերենից, սակայն սրանցից միայն մի քանիսը՝ ճոճույէ—Jesubier, դէսս սիճիլադոս—Terra sigillata, ճիպսոն—Gypsum թեպետ համապատասխանում են լատիներեն բառաձևերին, բայց արտասանվում են ֆրանսերենի հնչյունական կանոնների համաձայն: Այս բառերում լատիներեն «ջ» և «յ» գրերը ստանում են ֆրանսերեն «թե» և «ժի» հնչյունների արժեք և տառադարձվում միջին հայերենում «ճէ» տառով:

Նշված երևույթը խոսում է այն մասին, որ վերոհիշյալ լատիներեն բառերը մտել են միջնադարյան հայ բժշկական տերմինաբանության մեջ ոչ թե լատիներեն «Materia medica»-ներից, այլ հին ֆրանսերեն ղեղազիտարաններից: Վերջիններս, բացի լատիներեն գրականության ազդեցությունից, զգալի առնչություններ ունեին արևելյան «մուֆրադաթների» ու «սալդանաների» հետ: Զարմանալի է, որ «Ֆոանկերի» գրքերի մեջ մուտք են գործել արաբերեն ու պարսկերեն, ինչպես նաև արաբացված հունարեն բառեր, որոնք հետագայում սկսել են ընկալվել իբրև «Ֆոանկերեն» տերմիններ: Հետաքրքրական է նշել, որ Բիրունին «Սալդանայում» որպես միակ օրինակ «Ֆոանկերենից» բերել է լազների ցեղին պատկանող մի թռչունի անուն՝ սաֆրադուն²⁴, որը Ամիրդովյանը «Անգիտաց անպէտում» համարում է արաբերեն տերմին: Իրականում վերջինս հունա-լատիներեն Ossifragus բառի արարառված ձևն է, որը հանդիպում է ինչպես արևմտյան, այնպես էլ արևելյան ղեղազիտարաններում: Բիրունին այն վերցրել է «Ֆոանկերի» գրքերից, մինչդեռ Ամասիացու համար աղբյուր է ծառայել արաբական որևէ «մուֆրադաթ»: «Անգիտաց անպէտում» «Ֆոանկերենի» տակ հանդես է գալիս քարասերմիկ բույսի հունա-լատիներեն Lithospermum անունը, որը արաբական աղբյուրում աղավաղվելով հետագայում միջին հայերենում տառադարձվել է «ևսպէրմաթաւ» ձևով:

Պարսկերեն բառերից, որոնք մուտք են գործել ֆոանկների ղեղազիտարանների մեջ, կարելի է նշել «սէղէրէճ» կամ «շէղարաճի» տերմինը: Վերջինս ներկայացնում է անծխոտ բույսի պարսկերեն šaxtara անվան արաբացված šaxtara] ձևը: Միջնադարյան եվրոպական ֆորմակոգնոգիաներում այն, հավանաբար, ուղեւի լայն տարածում է ունեցել, քան Դիոսկորիդեսի Capnos կամ լատիներեն Fumaria տերմինները: Այստեղից էլ այն անցել է միջնադարյան հայ ղեղազիտարաններ:

«Անգիտաց անպէտում» հանդիպում է նաև երիցուկի «Ֆոանկերեն» «պապուենիսա» անունը: «Անուանք ղեղերոյ» բառարանում տրվում է սրա

²⁴ Берун и. Сайдана, с. 598.

«պապունիս» տարբերակը: Ղ. Ալիշանը «Հայբուսակում» բերում է «փափաթիս» տարբերակը, որը նա կապում է հունարեն Pappos (ծերունի, մեծ հայր, հայրապետ) բառի հետ²⁵ Սակայն, մեր կարծիքով, ավելի ճիշտ կլինի «պապունիս» կամ «պապունիս» բառի ծագումը կապել երիցունկի պարսկերեն babūna անվան հետ, որը ենթարկվելով լատինացման, ընկալվել է որպես չեզոք սեռի բառ: Վերջինս էլ ստացել է լատիներենի սեռական հոլովի «is» վերջավորությունը և դարձել babunis:

Ժամանակին Կարստը ուշադրություն է դարձրել «Անուանք դեզերոյ» բառարանում զետեղված լատիներեն և հին ֆրանսերեն տերմինների սխալ տառադարձության վրա²⁶, որը նա բացատրում էր բառարան կազմողի լատիներեն լեզվի թույլ իմացությամբ. դա արտահայտվել էր քերականական սխալների առկայությամբ և մասնավորապես լատիներեն բառերի «us» ու «um» վերջավորությունների շփոթմամբ, ինչպես նաև ուղղական հոլովի փոխարեն սեռականի օգտագործմամբ: Այսպես օրինակ, «Անգիտաց անպէտում», ինչպես և «Անուանք դեզերոյ» բառարանում, լատիներեն Helleborus-ը սխալ տառադարձվել է «էլէպարում», Schoenanthus-ը՝ «սիկինանդու» կամ «սիկինանդում», Semipervivum-ը՝ «սիմպերվիվու» կամ «սէմբէրվիվա» և այլն: Լատիներեն ուղիղ ձևերի փոխարեն՝ Piper, Laurus, Papaver, Saccharum օգտագործվել են թեք ձևեր՝ Piperi—պիպերի, Lauri—լաուրի, Papaveris—բաբավրիս, Sacchari—զախարի և այլն:

Վերոհիշյալ լատիներեն և լատինացված հունարեն տերմինների հանդես դալը միջնադարյան հայ դեղագիտականներում և ընդհանրապես բժշկական գրականության մեջ XV դարից հետո վկայում է լատինական տերմինաբանության աճող ազդեցության մասին, որը հետագայում XVIII դարի հայ բժշկարաններում և մասնավորապես Պ. Քալանթարյանի, Մ. Ռեստենի, Ս. Շահրիմանյանի գործերում դարձավ գերիշխող:

Հին և միջնադարյան հայ դեղագիտությունը սերտ կապեր է ունեցել հեռավոր Հնդկաստանի բժշկության հետ: Այստեղից Հայաստան էին բերվում զանազան բուսական, կենդանական և հանքային դեղանյութեր, որոնց անունները մտան հայ դեղագիտականները: Սրանցից «Անգիտաց անպէտում» հիշատակվում են՝ քաճուրը (Zingiber zerumbet), ֆուֆալը (Areca catechu), նարճիլը (Cocos nucifera), նարպասին (Curcuma zedoaria), պէսը (Aconitum ferox) և այլն: Ծառավորի հնդկերեն «նարպասի» անունը, ըստ Ամիրդովլաթի, ծագում է ընծախոտի «պէս» անունից: Հայ բժշկապետը նշում է, որ վերջինս գրվում էր ոչ թե արաբների մոտ ընդունված «պէշ», այլ «պէս» ձևով, որովհետև «ի հնդկաց լեզուն «շայ» չկա»²⁷: Իրականում ընծախոտի անունը ծագում է սանսկրիտյան Vish (թույն) բառից: Սակայն սանսկրիտում, ինչպես և նոր հնդկերեն լեզուներում գոյություն ունի «շա» շփականը: Այսուամենայնիվ մեր բժշկապետը չի սխալվում, քանի որ նրա ասածը վերաբերում է միջին հնդկերեն լեզուներին: Այս առումով ուշադրության է արժանի Բիրունու կարծիքը միջին հնդկերենի մասին: «Հնդկաստան» աշխատությունում նա գրել է. «Հիշատակում են, որ նրանց մոտ սկզբից տառերը թվով ավելի քիչ են եղել, իսկ հետագայում ավելացել են»²⁸: Իսկապես փենշարերենում «շա»-ն փոխառություն է համարվում²⁹: Փենշարերենում, ինչ-

²⁵ Ղ. Ալիշան, Հայբուսակ. Վենետիկ, 1895, էջ 115, 164:

²⁶ J. Karst. Das trilingue Medizinalglossar aus Ms. 310 d. Wiener Mechth. Bibliothek. Zeitschrift für armenische Philologie, 1903, B. 2, H. 2, S. 112.

²⁷ Ամիրդովլաթ Ամասիացի. Անգիտաց անպէտ, էջ 320:

²⁸ Бируни. Избранные произведения, т. 2, Индия, Ташкент, 1963, с. 175.

²⁹ И. С. Рабинович, И. Д. Серебряков. Панджабско-русский словарь, М., 1961, с. 955.

պես և մի շարք այլ հնդկերեն լեզուներում, հանդիպում են բույսերի անուններին՝ հանազան հնչյունաբանական տարբերակներ, որոնց մեջ «շա»-ի փոխարեն օգտագործվել է «սէ»-ն: Օրինակ, մենբեկի մի տեսակի՝ *Asparagus racemosus*-ի անունը փենջաբերենով *Satavar* է, իսկ մալալամ բարբառով՝ *Shata /ali*, կամ էլ սամիթը (*Anethum*) հինդի լեզվով կոչվում է *So-wa*, իսկ րենդալերենով՝ *S-honva* և այլն³⁰:

Այսպիսով, Ամասիացու վերահիշյալ կարծիքը բոլորովին էլ անհիմն չէ և մեկ անգամ ես դալիս է վկայելու հայ բժշկապետի խոր գիտելիքների և մեծ փորձի մասին բառարանագրության ու բժշկական տեքմինաբանության ասպարեզում:

«Անգիտաց անպլտր» իրավամբ համարվում է միջնադարյան հայ բառարանագրության դյուխործոցներից մեկը: Նրա մեջ խտացված ձևով պահպանվել է հայ բժշկության դարավրդ փորձը, գիտական լեզվի ու բժշկական տեքմինաբանության հարուստ բառապաշարն իր պատմական շերտերով: Բժշկության և մասնավորապես դեղագիտության բարդ և խրթին հարցերն Ամասիացին շարադրել է իր ժամանակի խոսակցական լեզվով՝ միջին հայերենով, որը ինքն անվանել է «աշխարհաբար»: Նա «Անգիտաց անպլտի» առաջաբանում դրում է. «Ծու այլ ասենք, թէ էր եղաւ այս գիրքս աշխարհաբարու նւ այս երեք պատճառի. Ա այն է, որ ամէն մարդ չկարէ բերական կարդալ ե կամ արտաքին դրնանք, որ դայս խրթին բաներն իմանայ. այնոր համար եղաւ աշխարհաբար»:

Ամասիացու գործերի և մասնավորապես «Անգիտաց անպլտի» բառապաշարի մասնադիտացված մասի՝ բժշկական տեքմինաբանության վերլուծությունը ցույց է տալիս, որ թեպետ նրա մեջ մտել են մեծ թվով օտար փոխառություններ հունարենից, լատիներենից, պարսկերենից, արաբերենից և մի շարք այլ լեզուներից, սակայն հնդինակը կիրառել է իր մայրենի լեզվի անսպառ հնարավորությունները բժշկագիտական հասկացողություններն արտահայտելու համար: Ամասիացին, իսկ նրանից երեք դար առաջ Մխիթար Հերացին, ընտրեցին հայ բժշկական տեքմինաբանության զարգացման միակ ճիշտ ուղին. շխուսափելով օտար փոխառություններից նրանք միաժամանակ մեծ ուշադրություն էին դարձրել բնիկ հայկական բառերի վրա, ստեղծելով ինքնատիպ տեքմիններ, որոնց մի մասը վերցված էր բանահյուսությունից:

Հայ բժշկական տեքմինաբանության ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ մեր ժողովրդի ավանդական և դասական բժշկությունը՝ երբեք չկորցնելով իր ինքնատիպությունը, չի վերածվել ինքնամոլո մի համակարգի, այլ շփվել է անտիկ ու արաբական մշակույթի հետ, հարստանալով համամարդկային փորձից:

³⁰ D. Sanyal, R. Chose. Vegetable drugs of India. Calcutta, 1934, p. 32, 460.

АМИРДОВЛАТ АМАСНАЦИ И СРЕДНЕВЕКОВАЯ АРМЯНСКАЯ МЕДИЦИНСКАЯ ТЕРМИНОЛОГИЯ

С. А. ВАРДАНЫАН

Резюме

Анализ языка и медико-ботанических терминов в трудах известного средневекового армянского врача Амирдовлата Амаснаци «Полезьа медицины» (1469), «Ахрапатни» (1459, 1481), «Ненужное для неучей» (1482) показывает, что наряду с коренными армянскими словами в них использовались также термины, заимствованные из греческого, латинского, персидского, арабского, сирийского и некоторых других языков. Удалось установить время заимствования терминов и выделить помимо более древнего слоя парфянских, греческих и сирийских слов сравнительно более поздний слой арабских, персидских и арабизированных греческих терминов, вошедших в среднеармянский язык после сдвига согласных. Большая часть заимствованных терминов в трудах Амаснаци подверглась искажению в арабоязычных источниках в связи с особенностями арабской графики, и в первую очередь из-за неправильной расстановки диакритических знаков. Терминологический анализ латинских и латинизированных греческих названий лекарственных средств в книге «Ненужное для неучей» впервые выявил в качестве их основного источника трехязычный армяно-арабско-латинский словарь из «Лечебника врача Ованеса» (рук. № 310 библиотеки Венской конгрегации мхитаристов).